## Արձանագրություն N 3
## ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար լուսավորության ապրանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

| | |
|---|---|
| *ք. Տաշիր* | «03» «մայիսի» 2019թ<br>ժ 11:00 |
| Մասնակցում էին՝ | |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)՝ | Ս. Անախասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | Ն. Մուրադյան, Ս. Սուքիասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | Հ. Կիրակոսյան, Ա. Շահբազյան |
| Գնման պատասխանատու/Մրցույթի Համակարգող (ԳՊ/ՄԻՄ) | Ս. Սարգսյան |

### 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
/Ս. Անախասյան/

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Բանակցությունների կազմակերպման մասին
3. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի մասին
4. ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին
5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

### 2. Բանակցությունների կազմակերպման մասին
/Ս. Անախասյան/

2.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակցի՝ «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ. պարբերությունը՝ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ը 03.05.2019թ. ժամը 11:00-ին հրավիրվել են ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, Տաշիրի համայնքապետարանի վարչական շենք 206 սենյակ հասցեում գների նվազեցման շուրջ բանակցությունների:

2.3 Բանակցությունների ավարտին «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի մասնակիցի՝ «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

| Հ/Հ | Անվանումը | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մեկուսիչ ՏՖ-20 | Էկոմիքս ՍՊԸ | 83333,33 | 16666,66 | 100000 | 100000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

### 3. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի մասին
/Ս. Անախասյան/

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշումով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Էկոմիքս» ՍՊԸ-ը՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

### 4. ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին
/Ս. Անախասյան/

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 03.05.2019թ. հարցում ներկայացնել ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը 03.05.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

### 5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
/Ս. Անախասյան/

5.1 «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության տրամադրման հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, Տաշիրի համայնքապետարանի վարչական շենք 206 սենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)՝ | | Ս. Անախասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | | Ն. Մուրադյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | | Ս. Սուքիասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | | Հ. Կիրակոսյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | | Ա. Շահբազյան |
| Գնման պատասխանատու/Մրցույթի Համակարգող (ԳՊ/Միմ) | | Ս. Սարգսյան |